**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

01.12.2020 թ.
Ելք 046/326
✉ Lusaghbyur.lori@mta.gov.am ,
հեռ. 093-34-47-89

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգելի պարոն մարզպետ՝

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հունվարի 26-ի թիվ 01/107.3/00404-20 գրության Ձեզ ենք ներկայացնում Լուսաղբյուր համայնքի ավագանու հերթական նիստի նախագծերը:

Առդիր 8 թերթ:

ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Сканировано с CamScanner

# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Լուսաղբյուր համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| Լուսաղբյուր | Ավագանու արտահերթ նիստ | 08.12.2020թ. | 11:00 | համայնքի ղեկավարի աշխատասենյակում |

Լուսաղբյուր համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան

Сканировано с CamScanner

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Հաստատել Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը`

1. Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի համայնքային սեփականության գույքագրման արդյունքների մասին
2.Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի ղեկավարի ամսեկան աշխատավարձի չափը հաստատելու մասին
3.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուրի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակազմի աշխատակիցների թվաքէանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը
4.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուրի գյուղական համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր հաստատելու մասին
5.Հայաստանի հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին
6. Անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Сканировано с CamScanner

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջով՝
Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի սեփականության ամենամյա պարտադիր գույքագրման արդյունքները, համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Сканировано с CamScanner

ՆԱԽԱԳԻԾ 21

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի,
Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքի ղեկավարի ամսեկան աշխատավարձի չափը 340. 000 (երեք հարյուր քառասուն հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Լուսաղբյուր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 22 որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Сканировано с CamScanner

ՆԱԽԱԳԻԾ **22-Լ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌ
ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱ
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱ
ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ Ե
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԴՈՒՆԱՄԱԼՅԱ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի առաջին կետով և 36-րդ հոդվածի առաջին կետով՝ Լուսաղբյուր համայնքի ավագանին

1. Սահմանել Լուսաղբյուրի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:
2. Ուժը կորցրած ճանաչել Լուսաղբյուր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 23-Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵ
ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱ

Сканировано с CamScanner

ՆԱԽԱԳԻԾ **23-Ն**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18 կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածներով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով
Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է`

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լուսաղբյուրի գյուղական համայնքի 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը` համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Сканировано с CamScanner

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով.
Լուսաղբյուր համայնքի ավագանին
Որոշում է՝

1. Հաստատել Լուսաղբյուր համայնքի 2021 թվականի բյուջեն՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԱՆԱՀԻՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Сканировано с CamScanner

## ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱ
## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂՈՒՆԱՄԱԼՅԱ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Լուսաղբյուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին>> թիվ 8-Ա որոշմամբ հաստատված կարգի 16-րդ, 16.2-րդ կետերով հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի 2020 նոյեմբերի 30-ի թիվ 8 եզրակացությունը՝

Լուսաղբյուր համայնքի ավագանին որոշում է՝

1.Բարելավել համայնքի բնակիչների դիմումները համայնքի բյուջեից համայնքի նորածին երեխաների ծնողներից մեկին, ուսման վարձ, սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵ
ԱՆԱՀԻՏ ՂՈՒԶԱՐՅԱ

Сканировано с CamScanner